

Հավելված  
Հաշվեքննիչ պալատի  
2025թ ապրիլի 29-ի թիվ 38-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



### ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ  
ԿԱՏԱՐՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025թ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                        |    |
|----------------------------------------------------------------------------------------|----|
| 1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ.....                                                                  | 2  |
| 2. ԱՄՓՈՓԱԳԻՐ .....                                                                     | 4  |
| 3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ .....                                           | 4  |
| 4. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ<br>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ..... | 5  |
| 5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....                                                      | 8  |
| 6. ԱՅԼ ՓԱՍՏԵՐ.....                                                                     | 17 |
| 7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ .....                                                        | 20 |
| 8 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....                                                               | 22 |

## 1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

### Հաշվեքննության հիմքը<sup>1</sup>

Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման, պետական բյուջեի կատարման կազմակերպման հաշվեքննության առաջադրանքը» հաստատելու մասին թիվ 149-Ա որոշում:

### Հաշվեքննության օբյեկտը

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

### Հաշվեքննության առարկան

Պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն, պետական բյուջեի կատարման կազմակերպում:

### Հաշվեքննության առարկայի չափանիշները

«Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և հայաստանի հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 706-Ն որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի «Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված

<sup>1</sup> «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:

|                                                                  |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |
|------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|                                                                  | <p>հաշվետվությունների կազմման, ներկայացման, ամփոփման ընդհանուր պայմանները, հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը հաստատելու և հայաստանի հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 176-Ն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի մարտի 28-ի N 324-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 254-Ն հրաման և այլն:</p> |
| <b>Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը</b>                  | 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |
| <b>Հաշվեքննության կատարման ժամկետը</b>                           | 2025 թվականի հունվարի 8-ից մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |
| <b>Հաշվեքննության մեթոդաբանությունը<sup>2</sup></b>              | Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:                                                                                                                                                                                                                    |
| <b>Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում</b> | Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Առուստամյանը:                                                                                                                                                                                                                                            |

<sup>2</sup> «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվետվությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության սկզբունքների (INTOSAI), ստանդարտների ու ուղեցույցների վրա:

## 2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ հիմնական փաստերը.

Հայաստանի Հանրապետության 2024 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվություններ չեն պատրաստվել<sup>3</sup>: Արդյունքում, բացակայում է Հայաստանի Հանրապետության ակտիվների և պարտավորությունների՝ հաշվետու տարվա սկզբի և վերջի դրությամբ վիճակը, հաշվետու տարվա դրամական հոսքերի, ինչպես նաև պետական մարմինների գործունեության արդյունքների վերաբերյալ օրենքով սահմանված ամբողջական տեղեկատվությունը:

Նախարարությունը չի ապահովել հաշվապահական հաշվառման նոր համակարգին ամբողջական անցումը: Արդյունքում, Կառավարության պարտքի գծով գործառնությունների օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվապահական հաշվառում չի վարվել: Նախարարությունը վարել է միայն իր տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի (հիմնարկի պահպանման ծախսերի) հաշվապահական հաշվառումը:

Նախարարությունում դեռևս ներդրված չէ օրենքով սահմանված ներքին աուդիտի համակարգը:

## 3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ<sup>4</sup>

Հաշվեքննության ընթացքում հասանելի էլեկտրոնային հարթակներից ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունների մանրամասն նկարագիրը, դրանց վերաբերյալ Նախարարության դիրքորոշումը և այդ կապակցությամբ հաշվեքննողների արձագանքը ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 5-րդ՝ «Անհամապատասխանությունները» բաժնում:

<sup>3</sup> «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջ՝ «3. Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, ֆինանսական հաշվետվությունները պատրաստում է լիազոր մարմինը: ... »

<sup>4</sup> Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուրակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնում է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:

Հետհսկողական գործընթացի շրջանակում նախորդ՝ 2023 թվականի տարեկան և 2024 թվականի պետական բյուջեների կատարման եռամսյակային (աճողական) հաշվեքննությունների արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություններում արձանագրված առանձին անհամապատասխանություններ չեն վերացվել, ու դրանով պայմանավորված՝ արդիական են նաև տրված առաջարկները:

#### 4. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նախարարության, որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի տարեկան պլանով նախատեսվել է 331,322,364.00 հազար դրամի ծախս, ճշտված պլանը կազմել է 354,888,781.50 հազար դրամ, ֆինանսավորումը՝ 319,705,084.60 հազար դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 319,721,608.09 հազար դրամ, փաստացի ծախսը՝ 319,712,675.54 հազար դրամ:

Դրամարկղային ծախսը կազմել է հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի 90.09 %-ը: Ըստ ծրագրերի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

2024 թվականի պետական բյուջեի տարեկան ցուցանիշներ  
(հազար դրամ)

| Ծրագիր          |                                                                                                               | Տարեկան պլան   | Տարեկան ճշտված պլան | Փաստ           | Փաստացի ծախս   |
|-----------------|---------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|---------------------|----------------|----------------|
| Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը |                                                                                                               | 331 322 364,00 | 354,888,781.50      | 319,721,608.09 | 319,712,676.54 |
| 1006            | Պետական պարտքի կառավարում                                                                                     | 323 177 841,00 | 344,998,841.00      | 313,617,271.09 | 313,617,271.09 |
| 1015            | Սոցիալական փաթեթների ապահովում                                                                                |                | 23,400.00           | 21,833.03      | 21,833.03      |
| 1031            | Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում                                                | 23 600,00      | 23,600.00           | -              | -              |
| 1108            | Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ | 7 998 559,40   | 9,720,576.90        | 5,960,140.37   | 5,951,207.82   |

|      |                                                |            |            |            |            |
|------|------------------------------------------------|------------|------------|------------|------------|
| 1137 | Գնումների գործընթացի կարգավորում և համակարգում | 119 300,00 | 119,300.00 | 119,300.00 | 119,300.00 |
| 1205 | Սոցիալական ապահովություն                       | 3 063,60   | 3,063.60   | 3,063.60   | 3,063.60   |

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ Նախարարության մասով տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2

(հազար դրամ)

| Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները                                                                           | Տարեկան պլան          | Տարեկան որոշումներով ճշտված պլան | Փաստ                  |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------|----------------------------------|-----------------------|
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                                                                                                                                            | <b>484,058,146.1</b>  | <b>458,301,085.2</b>             | <b>377,710,012.2</b>  |
| այդ թվում՝                                                                                                                                                 |                       |                                  |                       |
| <b>Ա.Ներքին աղբյուրներ-ընդամենը</b>                                                                                                                        | <b>351,208,648.4</b>  | <b>402,101,663.3</b>             | <b>359,773,265.1</b>  |
| այդ թվում՝                                                                                                                                                 |                       |                                  |                       |
| <b>1. Փոխառու զուտ միջոցներ</b>                                                                                                                            | <b>350,796,122.0</b>  | <b>365,990,581.1</b>             | <b>368,978,137.9</b>  |
| այդ թվում՝                                                                                                                                                 |                       |                                  |                       |
| <b>1.1. Արժեթղթերի (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) թողարկումից և տեղաբաշխումից զուտ մուտքեր</b>                                 | <b>350,796,122.0</b>  | <b>365,990,581.1</b>             | <b>368,978,137.9</b>  |
| ՀՀ ֆինանսների նախարարություն                                                                                                                               | 350,796,122.0         | 365,990,581.1                    | 368,978,137.9         |
| որից՝                                                                                                                                                      |                       |                                  |                       |
| գանձապետական պարտատոմսեր                                                                                                                                   | 350,800,000.0         | 365,994,459.1                    | 368,978,937.9         |
| մուրհակների մարում                                                                                                                                         | (3,878.0)             | (3,878.0)                        | (800.0)               |
| <b>2. Ֆինանսական զուտ ակտիվներ</b>                                                                                                                         | <b>412,526.4</b>      | <b>36,111,082.2</b>              | <b>(9,204,872.9)</b>  |
| այդ թվում՝                                                                                                                                                 |                       |                                  |                       |
| <b>2.3. Ելքերի ֆինանսավորմանն ուղղվող պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներ</b>                                                                 | <b>10,000,000.0</b>   | <b>13,491,879.3</b>              | <b>(15,835,697.4)</b> |
| <b>2.4. Վարկերի և փոխատվությունների տրամադրում</b>                                                                                                         | <b>(54,211,445.7)</b> | <b>(17,198,097.2)</b>            | <b>(15,717,577.5)</b> |
| - Արտաքին աղբյուրների աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի շրջանակներում ենթավարկերի տրամադրում այդ ծրագրերում ներգրավված տնտեսվարող սուբյեկտներին | (47,211,445.7)        | (5,104,446.1)                    | (3,704,426.4)         |
| - Բյուջետային վարկերի տրամադրում տնտեսվարող սուբյեկտներին                                                                                                  | (7,000,000.0)         | (12,093,651.1)                   | (12,013,151.1)        |

|                                                                                                                             |                        |                        |                        |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------|------------------------|------------------------|
| <b>2.5. Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքեր</b>                                                       | <b>30,815,854.3</b>    | <b>24,823,306.1</b>    | <b>25,245,658.9</b>    |
| որից՝                                                                                                                       |                        |                        |                        |
| <b>2.6.Այլ</b>                                                                                                              | <b>13,808,117.8</b>    | <b>14,993,994.0</b>    | <b>(2,897,257.0)</b>   |
| կայունացման դեպոզիտային հաշվի համալրում                                                                                     | (4,000,000.0)          | (4,000,000.0)          | (4,000,000.0)          |
| կայունացման դեպոզիտային հաշվից օգտագործում                                                                                  | 17,808,117.8           | 17,808,117.8           | -                      |
| Արտաբյուջետային հաշվի ելքերի ֆինանսավորմանն ուղղվող 2024 թվականի արտաբյուջետային միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներ | -                      | 586,284.8              | 503,151.7              |
| Արտարժույթային գործառնությունների վերագնահատումից մուտքերը կամ ելքերը                                                       | -                      | 599,591.4              | 599,591.4              |
| <b>Բ. Արտաքին աղբյուրներ - ընդամենը</b>                                                                                     | <b>132,849,497.7</b>   | <b>56,199,421.9</b>    | <b>17,936,747.2</b>    |
| այդ թվում՝                                                                                                                  |                        |                        |                        |
| <b>1. Փոխառու զուտ միջոցներ</b>                                                                                             | <b>139,957,671.0</b>   | <b>62,743,333.8</b>    | <b>30,895,219.8</b>    |
| այդ թվում՝                                                                                                                  |                        |                        |                        |
| <b>1.1. Վարկերի և փոխատվությունների ստացում</b>                                                                             | <b>315,015,809.2</b>   | <b>237,801,472.0</b>   | <b>196,877,428.8</b>   |
| նպատակային վարկերի գծով                                                                                                     | 132,835,809.2          | 67,345,166.9           | 70,669,800.4           |
| բյուջետային աջակցության վարկերի գծով                                                                                        | 182,180,000.0          | 170,456,305.1          | 126,207,628.4          |
| <b>1.2. Ստացված վարկերի և փոխատվությունների մարում</b>                                                                      | <b>(175,058,138.2)</b> | <b>(175,058,138.2)</b> | <b>(165,982,209.1)</b> |
| ՀՀ ֆինանսների նախարարություն                                                                                                | (175,058,138.2)        | (175,058,138.2)        | (165,982,209.1)        |
| <b>2.Ֆինանսական զուտ ակտիվներ</b>                                                                                           | <b>(7,108,173.3)</b>   | <b>(6,543,911.9)</b>   | <b>(12,958,472.6)</b>  |
| այդ թվում՝                                                                                                                  |                        |                        |                        |
| <b>2.2. Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքեր</b>                                                       | <b>382,821.2</b>       | <b>382,821.2</b>       | <b>374,812.4</b>       |
| որից՝                                                                                                                       |                        |                        |                        |
| Վրաստանից                                                                                                                   | 382,821.2              | 382,821.2              | 374,812.4              |
| <b>2.3 Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում</b>                                                           | <b>(7,490,994.5)</b>   | <b>(7,490,994.5)</b>   | <b>(6,829,730.0)</b>   |
| ՀՀ ֆինանսների նախարարություն                                                                                                | (7,490,994.5)          | (7,490,994.5)          | (6,829,730.0)          |
| որից՝                                                                                                                       |                        |                        |                        |
| Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով ստանձնած պարտավորությունների կատարում              | (7,490,994.5)          | (7,490,994.5)          | (6,829,730.0)          |
| <b>2.4. Այլ</b>                                                                                                             | <b>-</b>               | <b>564,261.4</b>       | <b>(6,503,555.0)</b>   |
| Ելքերի ֆինանսավորմանն ուղղվող պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներ                                              | -                      | 564,261.4              | (6,503,555.0)          |

## 5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 5.1. Առկա է անհամապատասխանություն՝

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 18-րդ և 24-րդ հոդվածների, համապատասխանաբար՝ 3-րդ մասերով սահմանված պահանջների հետ:

Համաձայն նշված օրենքի՝

- 18-րդ հոդվածի 3-րդ մասի՝

«Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, ֆինանսական հաշվետվությունները պատրաստում է լիազոր մարմինը.....»:

- 24-րդ հոդվածի 3-րդ մասի՝

«Լիազոր մարմինը սույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված առաջին ֆինանսական հաշվետվությունները պատրաստում է 2024 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար»:

ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու մասին» N 24-Ա որոշմամբ՝ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պետական կառավարման լիազոր մարմին է ճանաչվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Հաշվեքննությամբ (այդ թվում այլ պետական մարմիններում իրականացվող հաշվեքննություններով) պարզվել է, որ Նախարարությունը (մյուս պետական մարմինները) օրենսդրությամբ իրեն (իրենց) վերապահված գործունեության հիմնական ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության ակտիվների, պարտավորությունների, զուտ ակտիվների (սեփական կապիտալի) վիճակի, շարժի, գործունեության արդյունքների (հասույթների, ծախսերի) հաշվապահական հաշվառում չի վարում (չեն վարում): Նախարարությունը (մյուս պետական մարմինները) վարում է (վարում են) միայն Հայաստանի Հանրապետության՝ Նախարարության (մյուս պետական մարմինների) տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի (կազմակերպության պահպանման ծախսերի) հաշվապահական հաշվառումը:

Արդյունքում, Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, 2024 թվականի համար ֆինանսական հաշվետվություններ չեն պատրաստվել և բացակայում է 2024 թվականի տարեսկզբի ու տարեվերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության ակտիվների, պարտավորությունների

վիճակի, 2024 թվականի դրամական հոսքերի, ինչպես նաև պետական մարմինների գործունեության արդյունքների վերաբերյալ օրենքով սահմանված ամբողջական տեղեկատվությունը:

### **Նախարարության առարկությունը և բացատրությունը**

Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ հայտնում ենք, որ 2024 թվականի հաշվետու տարվա համար ՀՀ-ի՝ որպես մեկ միասնական միավորի ֆինանսական հաշվետվությունները հնարավոր է պատրաստել միայն հանրային հատվածի բոլոր կազմակերպությունների առանձին ֆինանսական հաշվետվությունները ստանալուց և ամփոփելուց հետո:

### **Հաշվեքննողի մեկնաբանությունը**

Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, ֆինանսական հաշվետվությունները Նախարարության կողմից չպատրաստելու փաստը արձանագրելիս, հաշվեքննությունը անդրադարձել է նաև օրենքի պահանջը չկատարելու պատճառին: Ըստ այդմ, պետական մարմինները<sup>5</sup> Կառավարությանը պատկանող ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունները կարող են պատրաստել միայն հաշվապահական հաշվառման միջոցով: Մինչդեռ, պետական մարմիններն օրենսդրությամբ իրենց վերապահված գործունեության հիմնական ոլորտներում հաշվապահական հաշվառում չեն վարում և հետևաբար՝ չեն կարող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնել Նախարարությանը:

Նախարարության առարկությունը (բացատրությունը) հաշվի առնելով, հարկ է նկատել նաև, որ « ... հանրային հատվածի բոլոր կազմակերպությունների առանձին ֆինանսական հաշվետվություններ ստանալու ... » պարագայում Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու հեռանկարն անորոշ է, քանի որ հենց Նախարարությունը՝ որպես բյուջետային հատկացումների կարգադրիչ, օրենքով իրեն վերապահված գործունեության հիմնական ոլորտներում<sup>6</sup>,

<sup>5</sup> «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված « 2. Սույն օրենքի իմաստով հանրային հատվածի կազմակերպություններ են համարվում Հայաստանի Հանրապետության ... պետական մարմինները ... »:

<sup>6</sup> «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով հաստատված՝ «Նախարարությունների վերապահված գործունեության հիմնական ոլորտները» հավելվածի 17-րդ կետը՝ «17. Ֆինանսների նախարարությունը մշակում և իրականացնում է ..., պետական պարտքի կառավարման, հաշվապահական հաշվառման, ... ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:»

մասնավորապես՝ պետական պարտքի կառավարության քաղաքականության իրականացմամբ պայմանավորված գործառնությունների հաշվապահական հաշվառում չի վարում և հետևաբար՝ «լիազոր մարմին» (Նախարարությանը) չի կարող «ներկայացնել» պետական պարտքը բնութագրող՝ օրենքով սահմանված ֆինանսական հաշվետվությունները (մանրամասները ներկայացված են հաջորդ կետում):

## 5.2. Առկա է անհամապատասխանություն

- «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հետևյալ պահանջների հետ.

«1. Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, զուտ ակտիվների (սեփական կապիտալի) վիճակի ու շարժի, ինչպես նաև հասույթների և ծախսերի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով»:

2. Կազմակերպությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում»:

- ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հուլիսի 23-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցը հաստատելու մասին» N 463-Ն հրամանով հաստատված ժամանակացույցի 15-րդ կետով հաշվապահական հաշվառման նոր համակարգին ՀՀ ֆինանսների նախարարության անցման համար սահմանված՝ 2017 թվականի հունվարի 1-ը ժամկետի հետ:

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 26-ի N 313-Ն որոշման<sup>7</sup> N 1 հավելվածով սահմանված Կարգի 5-րդ կետի համաձայն «5. Հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի միջոցով հաշվապահական հաշվառումը պետք է վարվի Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջներով՝ կիրառելով հաշվային պլանում ներկայացված հաշվապահական թղթակցությունները»:

<sup>7</sup> «Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերի՝ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանության որոշման կարգը եվ դրանց ավտոմատացված համակարգերի նկատմամբ պահանջները սահմանելու մասին»

Նախարարությունը, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հաստատել է Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը<sup>8</sup> (այսուհետ՝ Ստանդարտ), հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը<sup>9</sup> (այսուհետ՝ հաշվային պլան), ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթը և լրացման ցուցումները<sup>10</sup> (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ) և օրենքով նախատեսված իրավական այլ ակտերը:

Նախարարությունում ներդրված է Ստանդարտի պահանջներին և հաշվային պլանին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագիրը՝ հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգը:

Այդուհանդերձ, Նախարարությունը հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածի վերջի դրությամբ, դեռևս չի ապահովել ամբողջական անցումը հաշվապահական հաշվառման նոր համակարգին:

Այսպես, «Կառավարության գործունեության և կառուցվածքի մասին» օրենքով (հավելվածի 17-րդ կետ) Նախարարությանն է վերապահված նաև պետական պարտքի կառավարման ոլորտում կառավարության քաղաքականության մշակումն ու իրականացումը: Նախարարությունն իր կանոնադրության 18-րդ կետի համաձայն այդ ոլորտում ապահովում է՝

«ա. կառավարության պարտքի կառավարման ռազմավարության մշակումը և մշտադիտարկումը,

բ. փոխառությունների տարեկան ծրագրի կազմումը և իրականացումը,

գ. պետական պարտքի հաշվառումը և սպասարկումը,

դ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կանխիկ հոսքերի կանխատեսումը և կառավարումը,

ե. պետական գանձապետական պարտատոմսերի մանրաձախ վաճառքի կազմակերպումը.» և այլն:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Նախարարության հաշվապահական հաշվառման համակարգում, Ստանդարտի պահանջներով և հաշվային պլանի համապատասխան հաշիվներով չեն ընդհանրացվում կառավարության պարտքի վիճակի ու շարժի, հասույթների և ծախսերի վերաբերյալ, յուրաքանչյուր հաշվետու

<sup>8</sup> Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N 725-Ն հրամանով:

<sup>9</sup> Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 9-ի թիվ 207-Ն հրամանով:

<sup>10</sup> Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի հունվարի 30-ի թիվ 27-Ն հրամանով:

ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններով պարտադիր բացահայտման ենթակա տեղեկատվությունը (ցուցանիշները):

Նախարարության հաշվետու տարվա հաշվապահական հաշվառման հաշիվներում ներառված չեն Կառավարության պարտքի վերաբերյալ տեղեկատվությունը Ստանդարտով սահմանված պահանջներին համապատասխան ընդհանրացնելու համար հաշվային պլանով նախատեսված հաշիվները<sup>11</sup>:

Արդյունքում, Կառավարության պարտքի քաղաքականության իրականացման հետ կապված գործառնությունների (գործարքների) հաշվապահական հաշվառում Նախարարության կողմից չի վարվել: Դա հանգեցրել է Նախարարության ֆինանսական հաշվետվություններում Կառավարության պարտքի վիճակի և փոփոխությունների մասին տվյալների բացակայության:

### **Նախարարության առարկությունը և բացառությունը**

Հոդվածում նշված է, որ առկա է անհամապատասխանություն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջների հետ: Բացի այդ, նշվում է, որ նախարարության դեռևս 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման, պետական բյուջեի կատարման կազմակերպման հաշվեքննությամբ արձանագրվել էր, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վերահսկվող՝ պետությանը պատկանող ակտիվների և պարտավորությունների, ներառյալ ՀՀ պետական պարտքի գծով գործարքների և գործառնությունների հաշվապահական հաշվառում չի վարվում:

Ինչպես բազմիցս նշել ենք ՀՀ հաշվեքննիչ պալատին ուղղված մեր բազմաթիվ գրություններում, ՀՀ պետական պարտքը ՀՀ ֆինանսների նախարարության՝ որպես հանրային հատվածի առանձին կազմակերպության համար չի բավարարում պարտավորության սահմանմանը, հետևաբար չի կարող ներառվել ՀՀ ֆինանսների նախարարության առանձին ֆինանսական հաշվետվություններում: Ավելին, ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկվող մոտեցումը, այն է՝ ՀՀ պետական պարտքը ներառել ՀՀ ֆինանսների նախարարության առանձին ֆինանսական հաշվետվություններում, ինչը հակասում է ՀՀ ֆինանսների նախարարի 2014

<sup>11</sup> Հաշվային պլանով վարկերի, պարտավորումների, այլ փոխառու միջոցների գծով ստացվող և վճարվող գումարների, ակտիվների, պարտավորությունների, եկամուտների, ծախսերի հաշվապահական հաշվառման համար նախատեսված հաշիվները ներառված չեն Նախարարության հաշիվների շրջանառության տեղեկագրում (օրինակ, «Ներքին փոխառու միջոցների հիմնական գումարի մարման գծով արտահոսքեր»՝ 0611, «Արտաքին տոկոսավճարների գծով արտահոսքեր»՝ 0632, «Երկարաժամկետ վարկերի և փոխառությունների գծով վճարվելիք մայր գումարներ»՝ 4111, «Կարճաժամկետ վարկերի և փոխառությունների գծով վճարվելիք տոկոսներ»՝ 5112 հաշիվները և այլն):

թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 725-Ն հրամանով հաստատված ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջներին և կհանգեցնի ՀՀ ֆինանսների նախարարության առանձին ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ևս մեկ անգամ հայտնում ենք, որ ՀՀ պետական պարտքը, որպես պարտավորություն պետք է արտացոլվի միայն ՀՀ-ի՝ որպես մեկ միասնական միավորի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չպետք է արտացոլվի ՀՀ ֆինանսների նախարարության առանձին ֆինանսական հաշվետվություններում:

### **Հաշվեքննողի մեկնաբանությունը**

Հաշվեքննիչ պալատի կողմից անհամապատասխանությունների արձանագրման և առաջարկությունների տարընթերցումը կանխարգելելու նկատառումով ևս մեկ անգամ ներկայացվում են օրենքի պահանջները:

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

**5-րդ հոդվածի** (Հաշվապահական հաշվառումը) 2-րդ մաս՝

**«2. Կազմակերպությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում:»**

**11-րդ հոդվածի** (Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը) 1-ին մաս՝

**«1. Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը:»**

**11-րդ հոդվածի** 5-րդ մաս՝

**«5. Սկզբնական հաշվառման փաստաթղթերը ժամանակին և ամբողջական ձևակերպելու, հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու նպատակով սահմանված ժամկետներում դրանք փոխանցելու պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը կազմող և ստորագրող անձինք:»**

Նախարարության առարկության (պարզաբանման) մեջ, Օրենքով սահմանված վերը ներկայացված կարգավորումների հակադրումը «հանրային հատվածի առանձին կազմակերպության համար պարտավորության սահմանմանը» տեղին չէ, հատկապես, որ Հաշվեքննիչ պալատը երբևէ չի առաջարկել

Կառավարության պարտքի գործառնությունները ներառել «ՀՀ ֆինանսների նախարարության առանձին ֆինանսական հաշվետվություններում»: Հաշվեքննիչ պալատն իր առաջարկությունները ձևակերպում է օրենսդրության շրջանակում և տվյալ դեպքում ևս առաջարկում է՝ Կառավարության պարտքի գործառնությունների հաշվապահական հաշվառումը վարել ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի N 207-Ն հրամանով հաստատված հրահանգի համաձայն, որտեղ ինչպես Հաշվեքննիչ պալատն իր հաստատած բազմաթիվ փաստաթղթերում արձանագրել է՝ հստակ տարանջատված են Նախարարությանն ամրացված գույքի և Նախարարության հիմնական գործունեության ոլորտներին վերաբերելի գործառնությունների հաշվապահական հաշվառման համար նախատեսված հաշիվները, ուստի դրանք որևէ պարագայում չեն կարող համընկնել:

Ստանդարտի «Չարտադրված (բնական ծագում ունեցող) նյութական ակտիվներ» 15-րդ բաժնով սահմանված են բնական ծագում ունեցող նյութական ակտիվների (ընդերքի, ջրային ռեսուրսների, անտառների, ձկնային պաշարների և այլն) հաշվապահական հաշվառման մոտեցումները:

Նախարարության առարկության (բացատրության) մեջ արտահայտված մոտեցման համաձայն՝ նշված ակտիվները չեն բավարարում հանրային հատվածի առանձին կազմակերպության համար ակտիվների սահմանմանը, ըստ որի՝ «... ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կիոսեն դեպի կազմակերպություն ... (պարագրաֆ 15.10)»: Մինչդեռ, նույն բաժնի 15.11 պարագրաֆով սահմանված է, որ՝ «Պետությունը իր սեփականության իրավունքը գործադրում է հանրային հատվածի կազմակերպությունների միջոցով»:

Նույն մոտեցմամբ, Ստանդարտի 26.40 պարագրաֆի համաձայն «(...)երբ պետական բյուջե մուտքագրման ենթակա հարկը հավաքագրվում է կառավարության հարկային գերատեսչության կողմից, ապա ակտիվները և հասույթները հաշվեգրվում են պետության, այլ ոչ թե հարկային գերատեսչության հաշվին»:

Չնայած, ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի N 207-Ն հրամանով հաստատված հրահանգով՝ պետական մարմիններին ամրացված գույքի և նրանց գործունեության հիմնական ոլորտներին վերաբերող գործառնությունների հաշիվների հստակ տարանջատված լինելու հանգամանքին, այդուհանդերձ Կառավարությանը պատկանող ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվառում չի վարվում:

Այս և նախորդ կետի անհամապատասխանությունները արձանագրվել են նաև Նախարարությունում նախկինում իրականացված հաշվեքննություններով և դրանց արդյունքները ներկայացված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքէջում

հրապարակված «ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» Ընթացիկ եզրակացության մեջ (հղում <https://armsai.am/hy/current-conclusions>):

**5.3. Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի փետրվարի 7-ի «ՀՀ պետական պարտքի կառավարման կատարողականի բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 30-Ա հրամանով հաստատված հավելվածի՝ ՀՀ պետական պարտքի կառավարման կատարողականի բարելավման միջոցառումների ծրագրի 6-րդ կետի պահանջի հետ:**

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 07.02.2020թ. N 30-Ա հրամանով հաստատված ՀՀ պետական պարտքի կառավարման կատարողականի բարելավման միջոցառումների ծրագրի 6-րդ կետի՝ «DMFAS տեղեկատվական համակարգի շրջանակներում կառավարության պարտքի տվյալների մեկ միասնական բազա ունենալու և տվյալների ամբողջականություն ապահովելու համար արտաքին և ներքին պարտքերի, ինչպես նաև երաշխիքների, բյուջետային վարկերի և ենթավարկերի գծով բոլոր պարտավորությունները և գործարքները գրանցել DMFAS տեղեկատվական համակարգում»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2024 թվականի դրությամբ երաշխիքները, բյուջետային վարկերը և ենթավարկերը DMFAS տեղեկատվական համակարգում գրանցված չեն:

#### **Նախարարության առարկությունը և բացառությունը**

Արձանագրության նույն հատվածի 3.6-րդ կետով արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ՝ «DMFAS» տեղեկատվական համակարգի շրջանակներում բյուջետային վարկերը, ենթավարկերն ու երաշխիքները հաշվառելուն, ապա հայտնում ենք, որ առաջարկն ընդունվել է ի գիտություն և տեղեկացնում ենք, որ առկա է եղել տեխնիկական խնդիր, որը վերազինման փուլում է և ներկայումս թերի գրանցումները շտկվում են, իսկ հաշվետու շամանակաշրջանում հաշվառումն ամբողջական իրականացվել է «Excel Worksheet» ձևաչափով:

#### **Հաշվեքննողի մեկնաբանությունը**

Ընդունվել է ի գիտություն

#### **5.4.. Առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջների հետ:**

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի

- 2-րդ մասի՝ ներքին աուդիտն իրականացնում են կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման կամ հրավիրված՝ Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկված անձինք:

- 3-րդ մասի՝ կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը:

Նախարարությունում չի ապահովել ներքին աուդիտի համակարգի առկայությունը: Նշված անհամապատասխանությունն արձանագրվել է Ֆինանսների նախարարությունում դեռևս 2023 թվականից, ապա շարունակվել 2024 թվականի պետական բյուջեի երեք, վեց ինը անիսների և տարեկան կատարման, պետական բյուջեի կատարման կազմակերպման հաշվեքննության ընթացքում: Նախարարության կողմից ներկայացվել էր պարզաբանում, որ կազմակերպվել է ներքին աուդիտի բաժնի պետի թափուր պաշտոնը մրցութային կարգով համալրելու գործընթացը, որի արդյունքում ս.թ. մայիս ամսին մասնակիցների կողմից թեստավորման և/կամ հարցազրույցի փուլերը չհաղթահարելու պատճառով պաշտոնը չի համալրվել:

2024 թվականի ընթացքում նախարարության կողմից ներքին աուդիտի ստորաբաժանման թափուր պաշտոնների այլ մրցութային չի կազմակերպել:

#### **Նախարարության առարկությունը և բացատրությունը**

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնվել է ներքին աուդիտի համակարգի վերափոխման հայեցակարգի մշակման գործընթաց, ինչը ներառված է նաև ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 18-ի «ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության միջոցառումներում: Խնդրի վերաբերյալ նախատեսվող հայեցակարգային քննարկումների արդյունքում պետք է մշակվեր փոփոխությունների փաթեթը և փորձարկվեր նախարարությունում: Տեղեկացնում ենք, որ ներքին աուդիտի նոր հայեցակարգի մշակման գործընթացի ուշացմամբ պայմանավորված՝ մինչև նոր հայեցակարգի հաստատումը, որոշվել է ՀՀ ֆինանսների նախարարության կազմում ստեղծել ներքին աուդիտի ստորաբաժանում, ինչի մասով արդեն իսկ առկա է ՀՀ վարչապետի 08.02.2024թ.-ի թիվ N 124-Լ որոշումը: Տեղեկացնում ենք նաև, որ կազմակերպվել է ներքին աուդիտի բաժնի պետի թափուր պաշտոնը մրցութային կարգով համալրելու գործընթացը, որի

արդյունքում ս.թ. մայիս ամսին մասնակիցների կողմից թեստավորման և/կամ հարցազրույցի փուլերը չհաղթահարելու պատճառով պաշտոնը չի համալրվել: Հաջորդիվ, ըստ ընթացակարգի, հայտարարվել է երկրորդ մրցույթը, որի արդյունքում ս.թ. օգոստոսի 1-ին մրցութային կարգով տեղի կունենա ներքին աուդիտի բաժնի պետի թափուր պաշտոնը համալրելու նպատակով անցկացվող հարցազրույցի փուլը:

### **Հաշվեքննողի մեկնաբանությունը**

Ընդունվել է ի գիտություն:

## **6. ԱՅԼ ՓԱՍՏԵՐ**

6.1 Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրված 1006-13001 «ՀՀ կառավարության պարտքի սպասարկում» միջոցառման և 442200- «Արտաքին վարկերի գծով տոկոսավճարներ» հոդվածի շրջանակում արձանագրվել են այլ փաստեր:

Արտաքին վարկերի դիմաց փաստացի փոխանցված տոկոսավճարների կառուցվածքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2024թ. ընթացքում վարկատու կազմակերպություններին փոխանցված 66,341,088.14 հազ. դրամից 429,384.63 հազ. դրամը վարկային միջոցներից չմասհանված գումարների նկատմամբ հաշվարկված պարտավճարներն են:

Վարկային պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամկետների էական շեղումների արդյունքում պարտավորության վճարների մասով ՀՀ պետական բյուջեն կրում է լրացուցիչ բեռնվածություն, ինչը 2024 թվականին կազմել է 429,384.63 հազ. դրամ:

### **Նախարարության առարկությունը և բացառությունը**

Վարկային պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործառույթները (որոնց իրականացման ժամկետներից է բխում պարտավորության վճարների հաշվարկումը) գտնվում են ծրագրերի իրականացման համապատասխան կառույցների լիազորությունների շրջանակներում:

### **Հաշվեքննողի մեկնաբանությունը**

Ընդունվել է ի գիտություն:

6.2 «Կառավարության պարտքի սպասարկում» միջոցառման (1006-13001) «Ներքին տոկոսավճարներ» (441000) և «Արտաքին տոկոսավճարներ» (442000) հոդվածներով առկա է հաշվետվությունների խեղաթյուրման ռիսկ:

Խեղաթյուրման ռիսկը կապված է կառավարության արտարժույթային պետական պարտատոմսերի տոկոսավճարները ներքին և արտաքին պարտքի սպասարկման նպատակով դասակարգելիս, դրանք ամբողջությամբ արտաքին տոկոսավճարների հոդվածում ընդգրկված լինելու հետ՝ չնայած արտարժույթային պետական պարտատոմսերի գծով ներքին պարտքի (պաշարի) առկայությանը: Մասնավորապես, ՀՀ 2024թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվության համաձայն, արտարժույթային պետական պարտատոմսերի գծով արտաքին և ներքին տոկոսավճարները կազմել են՝ 27.4 մլրդ դրամ և 0 դրամ, համապատասխանաբար, իսկ արտարժույթային պետական պարտատոմսերի գծով արտաքին և ներքին պարտքը՝ 399.2 և 220.7 մլրդ դրամ, համապատասխանաբար<sup>12</sup>:

Վերոնշյալը Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրվել է նաև 2022 և 2023 թվականների պետական բյուջեի կատարման, պետական բյուջեի կատարման կազմակերպման հաշվեքննության արդյունքներով, որոնց արդյունքում, Հաշվեքննիչ պալատի առաջարկությունը որպես միջանկյալ լուծում ընդունելով, Նախարարությունը պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների տեքստային մասում պարբերաբար բացահայտել է արտարժույթային պարտատոմսերի գծով ներքին և արտաքին տոկոսավճարների դասակարգման անհնարինությունը և դրա պատճառները:

2024 թվականի հաշվեքննության արդյունքներով պարզվեց, որ վերը նշվածը հաշվեքննվող ժամանակահատվածում լուծում չի ստացել:

6.3 Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրված «Գործարար համաժողովի կազմակերպում» միջոցառման (1108-11010) շրջանակներում «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով արձանագրվել են այլ փաստեր:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ նախարարության կողմից «Գործարար համաժողովի կազմակերպում» միջոցառման (1108-11010) շրջանակներում 2,356,926.92 հազ. դրամի ձեռք բերված ծառայություններից 454,582.06 հազ. դրամը

<sup>12</sup> «Պետական պարտքի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժույթով թողարկված պարտատոմսերը ներքին պետական պարտքի աղբյուր են, իսկ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.07թ. N5-Ն հրամանի 16-րդ հավելվածի համաձայն, ներքին տոկոսավճարները բոլոր տոկոսավճարներն են, որոնք վճարվել են կամ հաշվեգրվել են ներքին աղբյուրներին: Ըստ այդմ՝ ՀՀ օրենսդրության համաձայն, ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժույթային պետական պարտատոմսերը ներքին պետական պարտքի ֆինանսավորման աղբյուր են և դրանց սպասարկման համար վճարվող տոկոսավճարները ենթակա են հաշվառման, որպես ներքին տոկոսավճարներ:

(«մեկ անձ» գնման ընթացակարգով ձեռքբերված) հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում արտացոլվել են «423900 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով, այն դեպքում, երբ համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային դասակարգումները և դրանց կիրառման կարգը հաստատելու մասին» N° 5-Ն հրամանի՝ ձեռքբերված ծառայությունները ենթակա են հաշվառման «423700 Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով: Միջոցառման շրջանակում իրականացված գնումները՝ ըստ պայմանագրերի ծածկագրերի, մատակարարների և գնման առարկաների, ներկայացած են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

| Պայմանագրի ծածկագիր | Գործընկերոջ անվանում                            | Պայմանագրի արժեք | Գնման ձևը       | Գնման առարկայի անվանում                                                                                                                                                                                      |
|---------------------|-------------------------------------------------|------------------|-----------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Ընդամենը            |                                                 | 2,356,926.92     |                 |                                                                                                                                                                                                              |
| A 5414404989        | ԷՅ ԴԱԲԼՅՈՒ ԱՅ ԳՐՈՒՊ ՓԲԸ                         | 305.00           | Մեկ անձ         | Ներկայացուցչական ծառայություններ /ձեռքի ժամացույցներ/                                                                                                                                                        |
| A 9584386062        | Նոր Զովք ՍՊԸ                                    | 349.86           | Մեկ անձ         | Ներկայացուցչական ծառայություններ /կոնյակներ Նաիրի/                                                                                                                                                           |
| B 1669088481        | Յակոբ Մոմճեան Ա/Ձ                               | 180.00           | Մեկ անձ         | Ներկայացուցչական ծառայություններ /արծաթե ճարմանդներ/                                                                                                                                                         |
| B 2288665484        | ՀՀ կենտրոնական բանկ                             | 360.00           | Մեկ անձ         | Ներկայացուցչական ծառայություններ /արծաթե հուշամեդալներ/                                                                                                                                                      |
| ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-24/31   | Դվին հյուրանոցային համալիր ՓԲԸ                  | 441,377.20       | Մեկ անձ         | Ներկայացուցչական ծառայություններ                                                                                                                                                                             |
| ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-24/40   | Ա.Սպենդիարյանի անվան օպերայի բալետի թատրոն ՊՈԱԿ | 10,000.00        | Մեկ անձ         | Ներկայացուցչական ծառայություններ                                                                                                                                                                             |
| ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-24/41   | ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀՄԴ                  | 2,010.00         | Մեկ անձ         | Ներկայացուցչական ծառայություններ                                                                                                                                                                             |
| ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3    | «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ                        | 1,902,344.86     | Երկփուլ մրցույթ | Խորհրդատվական ծառայություններ «2024 թվականի մայիսի 14-16-ը Երևանում անցկացվելիք Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի կառավարիչների խորհրդի 2024 թվականի տարեկան հանդիպման կազմակերպման ծառայություններ» |

Նախարարության կողմից միջոցառման շրջանակում իրականացվել է ներկայացուցչական ծախսերի գծով գնման գործընթաց, սակայն

հաշվետվություններում կատարված ծախսերը արտացոլվել են «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

Բյուջեների կատարման հաշվետվություններում համանման ծախսերի համար նույնական դասակարգումներ օգտագործելու նպատակով, նպատակահարմար է քննարկել ներկայացուցչական ծախսերի ճանաչման ընթացակարգը հստակեցնելու հնարավորությունը:

## 7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման, պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակում ուսումնասիրվել է նաև 2023 թվականի պետական բյուջեի տարեկան, ինչպես նաև 2024 թվականի պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման հաշվետվությունների արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություններով ներկայացված առաջարկությունների կատարման և արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման հետ կապված գործընթացը:

Առաջարկվել է ստեղծել 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման և 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննությամբ ներկայացված առաջարկությունների իրագործման նպատակով հաստատել միջոցառումների ծրագիր՝ յուրաքանչյուր միջոցառման համար սահմանելով պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույց, որը սակայն չի ստեղծվել:

## 8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննության արդյունքներով Նախարարությանն առաջարկվում է.

### 1. Միջոցներ ձեռնարկել՝

- 1.1. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, պետական մարմնին վերապահված գործունեության հիմնական ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության ակտիվների, պարտավորությունների հաշվապահական հաշվառումը վարելու ուղղությամբ:
- 1.2. Հայաստանի Հանրապետության, որպես մեկ միասնական միավորի, ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ուղղությամբ:

### 2. Ներդնել Նախարարության ներքին աուդիտի համակարգը:

### 3. Մշակել և հաստատել ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության որակի արտաքին գնահատման մեթոդաբանություն:

### 4. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի գործընթացի միասնականության սկզբունքի ապահովման, ինչպես նաև բյուջետավորման դասակարգման գործընթացն ավելի արդյունավետ և որոշակի դարձնելու նպատակով հստակեցնել «Ներկայացուցչական ծախսերի» նկարագիրը, դրանց դասակարգման պայմաններն ու չափանիշները:

### 5. Հաշվետու և դրան նախորդող տարվա հաշվեքննություններով ներկայացված առաջարկությունների իրագործման նպատակով հաստատել միջոցառումների ծրագիր՝ յուրաքանչյուր միջոցառման համար սահմանելով պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը:

ԿԱՐԵՆ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ



Հաշվեքննիչ պալատի անդամ

29 ապրիլի 2025 թվական

Հաշվեքննիչ պալատ

Բաղրամյան փող. 19,

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն